https://doi.org/10.46991/S&L/2022.94.040

ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համլետ Հարությունյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող
գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ

Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

Վերը նշված կարգավորումից ակնհայտորեն կարելի է առանձնացնել երեք կարևոր բաղադրիչ. 1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությունն ապահովում են ՀՀ զինված ուժերը, 2) յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել պաշտպանությանը, 3) պաշտպանությանը քաղաքացիների մասնակցության կարգը սահմանվում է օրենքով:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվելու են հայրենիքի պաշտպանությանը, մասնավորապես՝ ռազմական դրության պայմաններում հայտարարված զորահավաքի ընթացքում ռազմականացված տարբեր մարմինների ծառայողներին զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելու օրենսդրական խնդիրները:

Անդրադառնալու ենք այն հարցին, թե օրենսդրական գործող կարգավորումների համատեքստում Հայաստանի Հանրապետության որ քաղաքացիներն են կրում զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելու օրենսդրական պարտավորություն, և արդյո՞ք այդպիսի պարտավորություն դրված է նաև ռազմականացված տարբեր մարմինների՝ ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական և փրկարարական ծառայության համակարգերի ծառայողների վրա:

Նշված վերլուծության արդիականությունը հատկապես պայմանավորված է նրանով, որ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի Հանրապետությունների դեմ սանձազերծված ագրեսիվ հարձակումներին դիմակայելու, հայրենիքի պաշտպանության պարտքը կատարելու և մարտական գործողություններին մասնակցության գործին ներգրավվում էին նաև վերը թվարկված ռազմականացված մարմինների ծառայողներ[1] (նշված պարագայում խոսքը, իհարկե, չի վերաբերում Ոստիկանության *զորքերի* կամ սահմանապահ *զորքերի* ներկայացուցիչներին, որոնց մարտական գործողություններին մասնակցելու հնարավորության օրենսդրական կարգավորումները հստակ են և կներկայացվեն ստորև):

Այսպես, Սահմանադրության 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի

---

[1] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումներով՝ https://armlur.am/1045096/, https://www.armtimes.com/hy/article/199944, http://armenia.shafaqna.com/AM/AL/1187987:

համաձայն՝ զորահավաքը պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի, զինված ուժերը և այլ զորքերը պատերազմական ժամանակի կազմակերպման ու կազմի փոխադրելու միջոցառումների, քաղաքացիների զորահավաքային զորակոչի իրականացման համալիր է:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով թվարկվում են զինվորական ծառայության տեսակները, որոնցից է նաև զորահավաքային զինվորական ծառայությունը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանվում է, որ զինվորական ծառայության ներգրավումը, ի թիվս այլնի, իրականացվում է զորահավաքային զորակոչի միջոցով՝ պահեստազորում հաշվառված քաղաքացիների համար:

Այսպիսով, ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, որի շրջանակներում կարող է հայտարարվել զորահավաք, ինչի պարագայում էլ ՀՀ զինված ուժերի պահեստազորում հաշվառված քաղաքացիները կարող են զորակոչվել զորահավաքային զինվորական ծառայության՝ իրականացնելով հայրենիքի պաշտպանության սահմանադրական պարտավորությունը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պահեստազորում հաշվառումը զինվորական հաշվառման անբաժանելի մասն է, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստազորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման գործընթացի, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը:

Նույն հոդվածի 2-րդ մասով թվարկվում են այն քաղաքացիները, ովքեր ենթակա են պահեստազորում հաշվառման: Հատկանշական է, որ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Զինված ուժերի պահեստազորում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության համակարգերից արձակված քաղաքացիները:

Այսինքն, կարգավորումից հնարավոր է դառնում եզրահանգել, որ թվարկված ռազմականացված մարմիններում ծառայություն անցնելու ընթացքում քաղաքացիները հաշվառված չեն լինում Զինված ուժերի պահեստազորում:

Վերը նշվածի մասին է վկայում նաև, օրինակ, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումն առ այն, որ ոստիկանությունում ծառայողի զինվորական հաշվառումն իրականացնում է ոստիկանությունը՝ Կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1740-Ն որոշմամբ սահմանվել է ոստիկանությունում ծառայողի զինվորական հաշվառման կարգը, որի 5-րդ կետի համաձայն՝ զինվորական կոմիսարիատը *(ներկայում՝ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն-մեջբերումը՝ հեղինակի)* անվանական ցուցակների հիմնավորվածությունը ճշտելուց հետո զինվորական հաշվառման փաստաթղթերում կատարում է համապատասխան նշումներ Զինված ուժերի հաշվառումից հանելու մասին: Հաշվառման քարտը պահպանվում է զինվորական կոմիսարիատում՝ հատուկ հաշվառման վերցված զինապարտների քարտադարանում, զինվորական գրքույկը կամ զորակոչային կցագրման վկայականը, իսկ պահեստազորի սպաների համար՝ զինվորական կրճատված անձնական գործը փոխանցվում են ոստիկանության համապատասխան կադրային ծառայություն, որտեղ այն պահվում է ծառայողի անձնական գործում՝ ոստիկանությունում ծառայության ամբողջ ընթացքում:

Բացի ոլորտային օրենսդրական կարգավորումներից՝ կարևոր է նաև մեջբերել

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշումը, որով հաստատվել է զինվորական հաշվառման կարգը: Նշված կարգի 7-րդ կետի համաձայն՝ զինվորական կոմիսարիատները զինվորական հաշվառման վերցված և ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության կամ քրեակատարողական ծառայության կամ փրկարարական ծառայության համակարգերում ծառայության անցած, ինչպես նաև ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության ուսումնական հաստատություն ընդունված զինապարտների մասին տվյալները համապատասխանաբար փոխանցում են ոստիկանությանը, ազգային անվտանգության ծառայությանը, քրեակատարողական ծառայությանը և փրկարարական ծառայությանը՝ այդ ծառայությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների համաձայն նշված զինապարտների զինվորական հաշվառումն իրականացնելու համար:

Հետևաբար, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության համակարգերի ծառայողները, չունենալով ՀՀ զինված ուժերի պահեստազորի հաշվառում, ռազմական դրություն և զորահավաք հայտարարվելու պարագայում Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (նախկինում՝ զինկոմիսարիատ) կողմից *զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվել չեն կարող*:

Նշվածի համատեքստում կարևոր է նաև մեջբերել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ զինված ուժերի համալրումը մարդկային ռեսուրսներով իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության, զորահավաքային զորակոչի միջոցով: Այսինքն, նախ՝ զինված ուժերի համալրումն իրականացնող գերատեսչությունը Պաշտպանության նախարարությունն է, երկրորդ՝ հոդվածը թվարկում է այն եղանակները, որոնցով հնարավոր է դառնում համալրել զինված ուժերը, և այդ եղանակներից մեկը զորահավաքային զորակոչն է:

Վերը թվարկված համակարգերի ներկայացուցիչներին զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելու հնարավորության բացակայության պարագայում հարց է առաջանում, թե ինչ եղանակով պետությունը պետք է հնարավորություն ունենա օգտագործելու մարդկային նման ահռելի ռեսուրսը և անհրաժեշտության դեպքում ներգրավելու թվարկված համակարգերի ծառայողներին զորահավաքային զինվորական ծառայությանը (այսինքն՝ հնարավորություն ունենա նրանց ներգրավելու նաև ռազմական գործողություններին), քանի որ խնդիրը կապված է ոչ միայն նշված համակարգերի ծառայողների զինվորական հաշվառման, այլ նաև նրանց օրենսդրական պարտականությունների հետ, քանի որ, ինչպես կներկայացվի ստորև, ռազմականացված նշված մարմինների ծառայողների համար վերաբերելի օրենսդրական կարգավորումներով ռազմական գործողություններին մասնակցության պարտականություն նախատեսված չէ:

Այսպես, գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ, Զինված ուժերից բացի, ռազմականացված այլ մարմինների ծառայողներից մարտական գործողություններին ներգրավման օրենսդրական հնարավորություն է նախատեսված միայն ***ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի, պետական պահպանության ծառայության և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումների ներկայացուցիչների համար («Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հասկացությամբ՝ «այլ զորքեր»[1])***, քանի որ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ ՀՀ զինված ուժերի կազմում

[1] Տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-196-Ն, ընդունված՝ 15.11.2017թ., 3-րդ հոդված 1-ին մաս 7-րդ կետ, «այլ զորքեր» հասկացություն:

ընդգրկվում են նաև *այլ զորքերը,* քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը: Իսկ այնպիսի խնդիր, ինչպիսին Հայաստանի Հանրապետության վրա հնարավոր զինված հարձակման կանխումն է, կասեցումը, լարվածության օջախի չեզոքացումը, ռազմական գործողությունների իրականացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը՝ զինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ, իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կողմից[1]:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության, առողջապահության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ու այլ պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:

Ճիշտ է, սույն հոդվածի ուսումնասիրության առարկա դարձած համակարգերի մարդկային ռեսուրսը ևս կարող է օգտագործվել պատերազմական իրավիճակներում, սակայն զուտ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման տարաբնույթ աշխատանքներ իրականացնելու, այլ ոչ թե հենց ռազմական գործողություններ իրականացնելու շրջանակներում (օրինակ՝ ոստիկանության ծառայողները կարող են իրականացնել ռազմական դրություն հայտարարված տարածք մուտք գործելու և այնտեղից դուրս գալու հատուկ ռեժիմի ապահովմանը, բնակչության կենսագոյությունը, ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների և տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանությանն ուղղված գործողություններ):

Նույնը հնարավոր է դառնում եզրակացնել նաև թվարկված ռազմականացված մարմինների լիազորությունները սահմանող վերաբերելի օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունից:

Այսպես, օրինակ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-18-րդ հոդվածներով սահմանվում են ոստիկանության պարտականությունները, որոնք են մարդու անվտանգությունն ապահովելը և նրա իրավունքներն ու ազատությունները պաշտպանելը, օրենքով պաշտպանության ենթակա անձանց կյանքի, առողջության և (կամ) գույքի պաշտպանությունն ապահովելը, հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելը, ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելը, զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, քաղաքացիների և կազմակերպությունների գույքը պահպանելը, հատուկ հանձնարարություններով հարկադրանքի միջոցներ իրականացնելը, անձնագրային ռեժիմը պահպանելիս, բնակչության պետական ռեգիստրը և Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարելը:

Նշված օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում են նաև Ոստիկանության պարտականություններն արտակարգ իրադրության պայմաններում, և հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ Ոստիկանությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա առանձին մասերում արտակարգ իրավիճակի կամ *ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը*, համաձարակների ժամանակ կարանտինային միջոցառումների անցկացմանը:

Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրականացվող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները սահմանված են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, և նշված միջոցառումների շարքում է նաև ընդգրկված մարտական գործողություններին ուղղակի մասնակցություն ենթադրող միջոցառումը, այն է՝ Հայաստանի Հանրա-

[1] Տե՛ս նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ:

պետության զինված ուժերի և այլ զորքերի փոխադրում լիակատար մարտական պատրաստականության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարումը և անցկացումը:

Ինչպես նշվեց վերևում, թեպետ, օրինակ, ոստիկանության (*խոսքը Ոստիկանության զորքերի մասին չէ*) կամ մյուս ռազմականացված մարմինների ծառայողներն ունեն ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման օրենսդրական պարտականություն, **սակայն դա ինքնին չի ենթադրում մարտական կամ ռազմական գործողություններին ներգրավում և մասնակցություն:**

Այլ կերպ՝ ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական և փրկարարական ծառայողները, փաստորեն, նշված համակարգերում ծառայություն անցնելու ընթացքում հաշվառված չեն Զինված ուժերի պահեստազորում, այսինքն՝ չեն կարող նաև զորակոչվել զորահավաքային զինվորական ծառայության, պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ չեն ընդգրկվում Զինված ուժերի կազմում, ինչպես նաև նրանց օրենսդրական պարտականությունների շարքում նշված չէ ռազմական գործողություններին անմիջական մասնակցության հնարավոր որևէ դեպք[1] (օրինակ, հայտարարված ռազմական դրության շրջանակներում): Այսինքն՝ նշված համակարգերի ծառայողները կարող են ներգրավվել ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման այնպիսի աշխատանքներում, որոնք կապված չեն զինված հարձակման կանխման, կասեցման, լարվածության օջախի չեզոքացման, ռազմական գործողությունների իրականացման, հրադադարի կամ հաշտության պարտադրման խնդրի հետ, որը գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում դրված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի վրա:

Ստացվում է, որ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական և փրկարարական համակարգերի ծառայողները Սահմանադրության 14-րդ հոդվածի ուժով կրում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու պարտավորություն, սակայն պաշտպանության մասնակցության կարգը նշված համակարգերի ծառայողների համար վերաբերելի օրենքներով սահմանված է:

Իհարկե, 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած մարտական գործողությունները հերթական անգամ ապացուցեցին հայ ժողովրդի նվիրականությունն ու հայրենիքի պաշտպանության անհրաժեշտության բարձր գիտակցումը, քանի որ, ինչպես նշվեց վերևում, թվարկված բոլոր համակարգերի ծառայողները կամավորական հիմունքներով անձնուրացաբար և հերոսաբար մեկնել են մասնակցելու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, սակայն սույն հոդվածով վերլուծության առարկա դարձած խնդիրներն անհրաժեշտ է կարգավորել օրենսդրությամբ:

Ավելին, չբացառելով մարտական գործողություններին մասնակցության ընդգր-

---

[1] Այս հարցի հետ կապված հարկ է մեջբերել «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի կարգավորումն առ այն, որ փրկարար ծառայությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման դիմակայմանը: Նախ՝ կարևոր է արձանագրել, որ թվարկված ռազմականացված մարմինների լիազորությունների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ նման կարգավորում նախատեսված է միայն «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում, այսինքն՝ մյուս համակարգերի լիազորությունները սահմանող վերաբերելի օրենսդրական կարգավորումներում նման դրույթ բացակայում է: Երկրորդ՝ չնայած «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում այսպիսի կարգավորման առկայությանը՝ այն կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների, քանի որ, ինչպես նշվել է սույն հոդվածում, ՀՀ զինված ուժերի խնդիրներից է Հայաստանի Հանրապետության վրա հնարավոր զինված հարձակման *կանխումը, կասեցումը, լարվածության օջախի չեզոքացումը, ռազմական գործողությունների իրականացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը*: Այսպիսով, «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի մեջբերված կարգավորումից պարզ չէ, թե արդյոք զինված հարձակմանը դիմակայումը ենթադրում է նաև, օրինակ, ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն:

կելու վերաբերյալ վերը թվարկված համակարգերի ղեկավարների ներքին (այդ թվում՝ հնարավոր է գաղտնի) հրամանների առկայությունը, ևս մեկ անգամ անհարժեշտ է ընդգծել, որ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցության կարգը պետք է սահմանվի բացառապես օրենքով: Հետևաբար, օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող որևէ նման իրավական ակտ չի բխի Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումից:

Հասկանալով ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական և փրկարարական համակարգերի կարևորությունը, նույնիսկ ռազմական դրության պայմաններում դրանց բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտությունը՝ այնուամենայնիվ չափազանց կարևոր է նաև նման օրենսդրական բացի վերացումը՝ հատկապես հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային ներկա իրավիճակը:

Խնդրի կարգավորման և լուծման տարբերակները քննարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ թվարկված համակարգերի բնականոն գործունեության կարևորությունը, և նշվածի համատեքստում էլ հարկ է նաև ընդգծել, որ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ զորահավաքային զորակոչի ենթակա չէ այն քաղաքացին, որն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Այսպիսով, գործող օրենսդրական կարգավորման շրջանակներում հնարավոր է դառնում ամրագրել նաև վերը թվարկված համակարգերի այն քանակի հաստիքներ, որոնք նաև ռազմական դրության պայմաններում բավարար և անհրաժեշտ կլինեն դրանց գործառույթները պատշաճորեն իրականացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, նկատի ունենալով պատերազմական իրավիճակում հայտարարված ռազմական դրության և զորահավաքի պայմաններում հայրենիքի պաշտպանության էքզիստենցիալ կարևորությունը, միևնույն ժամանակ ելնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներից և դրանք պահպանելու անհրաժեշտությունից՝ առաջարկվում է օրենքով ամրագրել ռազմական դրության և զորահավաքի ժամանակահատվածում ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական և փրկարարական համակարգերի ծառայողների զինվորական հաշվառումը Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության իրավասության տիրույթ փոխանցելու կարգավորում, ինչի շնորհիվ էլ Պաշտպանության նախարարությունն օրենսդրական հնարավորություն կունենա նշված համակարգերի ծառայողներին զորակոչել զորահավաքային զինվորական ծառայության, հետևաբար նաև՝ մարդկային այդ մեծաթիվ ռեսուրսն օգտագործել ՀՀ զինված ուժերի կազմում:

Կատարված առաջարկի կարևորությունը դրսևորվում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը յուրաքանչյուր քաղաքացու մասնակցության սահմանադրական պարտավորությունն ապահովելու տեսանկյունից, այլ նաև այն հանգամանքով պայմանավորված, որ հենց ՀՀ զինված ուժերի վրա է դրված Հայաստանի Հանրապետության պաշտպանության խնդիրը, հետևաբար՝ ՀՀ զինված ուժերն է պատասխանատու այն մարմինը, որը, նախ, որոշում է մասնագետների շրջանակն ու քանակը, ովքեր անհրաժեշտ են մարտավարական և ռազմական տարբեր խնդիրներ կատարելու տեսանկյունից և երկրորդ՝ ղեկավարում է ռազմական նպատակների համար ուղղվող մարդկային և տեխնիկական ողջ ռեսուրսը:

Ընդ որում, վերը նշված առաջարկն իրացնելու նպատակով փոփոխություններ է անհրաժեշտ կատարել ինչպես թվարկված համակարգերի վերաբերելի օրենքներում և հաշվառման կարգերը հաստատող որոշումներում, այնպես էլ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման մեջ:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ВОПРОСЫ ПРИВЛЕЧЕНИЯ СОТРУДНИКОВ ВОЕНИЗИРОВАННЫХ ОРГАНОВ К МОБИЛИЗАЦИОННОЙ ВОЕННОЙ СЛУЖБЕ

Гамлет Арутюнян
Соискатель кафедры конституционного права ЕГУ,
Прокурор управления по взысканию имущества
незаконного происхождения генеральной прокуратуры РА

В статье рассматривается вопрос о том, кто в Республике Армения несет юридическую обязанность быть призванным на мобилизационную военную службу в контексте действующих законодательных положений, возлагается ли такое обязательство на сотрудников различных военизированных органов, включая полицию, службу национальной безопасности, пенитенциарную и спасательные службы. Актуальность данного анализа обусловлена тем, что в сентябре-ноябре 2020 года представители вышеуказанных органов принимали участие в боевых действиях для отражения агрессивных атак, совершенных Азербайджаном против Арцаха и Армении, для выполнения долга по защите родины (в данном случае, конечно, речь не о представителях войск полиции или пограничных войск: правовые нормы о возможности участия их в боевых действиях конкретно предусмотрены и также будут представлены в статье).

LEGISLATIVE ISSUES OF INVOLVING MILITARY EMPLOYEES IN THE MOBILIZATION MILITARY SERVICE

Hamlet Harutyunyan
PhD Student at the YSU Chair of Constitutional Law,
Prosecutor of the RA Prosecutor General's Office
Department for the Confiscation of Property of Illicit Origin

The article discusses the question of the scope of RA citizens who bear the legal obligation to be called up for mobilization military service in the context of the current legislative provisions, whether such an obligation is imposed on employees of various military agencies, including the police, the national security service, the penitentiary and rescue services. The relevance of this analysis is especially highlighted due to the fact that in September-November 2020, representatives of the above agencies took part in hostilities to repel the aggressive attacks committed by Azerbaijan against Artsakh and Armenia, to fulfill the duty of defending the motherland (in this case, of course, speech not about representatives of the police or border troops: the legal norms on the possibility of their participation in hostilities are specifically provided for and will also be presented in the article).

Բանալի բառեր – *ռազմական դրություն, զորահավաք, մարտական գործողություններ, ռազմականացված մարմիններ, ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, քրեակատարողական ծառայություն, փրկարար ծառայություն*
Ключевые слова: *военное положение, мобилизация, боевые действия, военизированные органы, полиция, служба национальной безопасности, пенитенциарная служба, спасательная служба.*
Key words: *martial law, mobilization, hostilities, military employees, police, national security service, penitentiary service, rescue service.*